« 27 » սեպտեմբեր 2024թ. No 5256 - Ա

«ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2024թ.-ից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

- Գրություն՝ 10.03-11.04
- Թիրախային լսարան՝ բուժքույրեր
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-20 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 6 տեսական և 6 գործնական կրեդիտ. դասավանդողներ Վաչիկ Հակոբյանին՝ ՇՄԶ 6 տեսական և 6 գործնական կրեդիտ, Վիգեն Խաչատուրյանին՝ ՇՄԶ 6 տեսական և 6 գործնական կրեդիտ, Արմեն Հայրապետյանին՝ ՇՄԶ 6 տեսական և 6 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 011300088

Օր 1	
3 ժամ	**Դասախոսություն** Մասնագիտական հիվանդությունների տեսակները, դրանց կանխարգելումը, սուր և քրոնիկ դրսևորումները: Ընթացիկ բժշկական զննում: Առաջին բուժօգնություն: Հասկացողություն աղետի մասին: Առաջին բուժօգնության կազմակերպում արտակարգ իրավիճակների պայմաններում: Շնչառության, շնչուղիների անցանելիություն: Օտար մարմնի հեռացում շնչուղիներից (Հայմլիկ վարժանք): Սուր շնչառական խանգարում: Արհեստական շնչառություն, ցուցումները (բերան-բերան, բերան-քիթ և Ամբու պարկ): CPR, ՍԹՎ, սրտի անուղղակի մերսում, ցուցում, կատարման տեխնիկան: Հաշվի առնելով Էթիկայի կանոնները՝ (կրոնական պատկանելիությունը, դավանանքը և միջավայրը) CPR ցուցումը, կլինիկական մահվան փուլ, CPR-ի ավարտը, աղյունավետության և անարդյունավետության դեպքում: Կողքի անվտանգ դիրք (ԿԱԴ): Անգիտակից վիճակներ (ուշագնացություն, կոլապս, կոմա)
3 ժամ	**Գործնական աշխատանք** Ցուցադրել դասընթացի մասնակիցների վրա, աղետի որ տեսակի ժամանակ ինչպիսի քայլեր կատարել, սեփական անվտանգության համար օգտագործվող միջոցների, նաև ձեռքի տակ եղած միջոցների ցուցադրում: Կատարել տեղանքի զննում, գնահատել բուժօգնություն կազմակերպողի և տուժածի անվտանգությունը և ռիսկերը: Մասնակիցներին ցույց տալ կարծեցյալ տուժածի վրա առաջնային և երկրորդային զննման տեխնիկան, սկիզբը,

	հաջորդականությունը մինչև հոսպիտալային փուլում: Կարծեցյալ տուժածի և մանեկենի վրա ցուցադրել արհեստական շնչառության տեխնիկան (բերան-բերան, բերան-քիթ, Ամբուի պարկ)
Օր 2	
3 ժամ	**Դասախոսություն** Համաճարակաբանական հսկողության հիմնական սկզբունքները, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններ, դրանց կանխարգելումն ու վարումը: Առողջ ապրելակերպի քարոզչություն: Արտադրական տրավմատիզմ: Վերքեր, վնասվածքներ, տեսակները, դասակարգում: Վերքերի մշակում, վիրակապում: Արյունահոսություններ, տեսակները, դադարեցման մեթոդները: Սուր որովայն: Ոսկրերի կոտրվածքներ, հոդախախտեր. Կրաշ սինդրոմ: Անշարժացման մեթոդները: Այրվածքներ (ջերմային, քիմիական, ճառագայթային, էլեկտրական)
3 ժամ	**Գործնական աշխատանք** Արյունահոսության վերահսկում, արյունահոսությունը դադարեցնող միջոցների ցուցադրում, օգտագործման ձևերը, ձեռքի տակ ունեցած միջոցների ցուցադրում և տարբեր արյունահասությունների դեպքում (լարաններ, գործվածքային լարաններ, տուրնիկետներ) օգտագործման ձևերը: Ցուցադրել մատնային ճանապարհով զարկերակային արյունահաոսության դադարեցման տեխնիկան: Ցուցադրել վիրակապերի տեսակները (փափուկ և կոշտ). մասնակիցները մեկը մյուսի վրա կցուցադրեն մարմնի տարբեր սեգմենտների վիրակապման տեխնիկան: Ցուցադել վերջույթների անշարժացման միջոցները (փայտե, մետաղյա, ճկուն, պլաստիկ, պնևմատիկ բեկակալներ-շինաներ): Մանեկենի վրա մասնակիցներին ցուցադրել տաբեր վնասվածքների ժամանակ տեղադրվող անշարժեցնող միջոցների (բաց և փակ կոտրվածքներ, հոդախախտեր, ամպուտացիաներ) օգտագործման մեթոդը: Ինչպիսի անշարժացում և վիրակապում կատարել Կրաշ սինդրոմի ժամանակ: Ցուցադրել ձեռքի տակ եղած միջոցներով և բժշկական պարագաներով ցրտահարության և այրվածքների ժամանակ վիրակապման տեխնիկան: Ցուցադրել տուժածի տեղափոխման միջոցները՝ փայտե, բրեզենտե, պլաստիկ, մետաղական պատգարակներ:

Դասավանդողներ՝ Վաչիկ Հակոբյան, Վիգեն Խաչատուրյան, Արմեն Հայրապետյան: